
ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<https://doi.org/10.52837/18291422-2018.31-195>

ԿՈՋՄՈՅԱՆ ԱՐՄԱՆՈՒՇ

ԻՐԱՆԻ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՆԻԶԱՄԻՒ «ԽՈՍՐՈՎ ԵՎ ՇԻՐԻՆ» ՊՈԵՄՈՒՄ

XII դարից սկսած՝ Նիզամիի «Խոսրով և Շիրին» պոեմն ուղեկցում է համայն գրասեր մարդկությանը, սակայն այս ողջ ընթացքում ամենանվիրյալ մահմեդականն անգամ, որի մշտական ուղեկիցն է եղել Ղուրանով ամրագրված ատելությունը հեթանոսական կուռքերի և անհաշտվողականությունը այլահավատների նկատմամբ, չի կշտամբել Նիզամիին՝ հեթանոս Խոսրովին հերոսացնելու և քրիստոնյա Շիրինին ներբողելու համար: Առավել ևս, երբ պարսից գրականության մեջ նոր չէին անցյալի փառաբանումը և պատմական Իրանի հերոսների ջատագովումը: Դրա հանճարեղ օրինակը երկու դար առաջ ստեղծել էր Ֆիրդուսին իր «Շահնամեում»՝ ներբողելով Իրանի դիցաբանական անցյալը:

Պատմությանը հայտնի Նիզամիի առաջին քննադատը եղել է նրա մտերիմն ու բարեկամը.

Ո՛վ դու, որ (վաղուց) թակել ես միաստվածության դուռը և փառաբանված ես,

Ինչիդ է հարկավոր մոզերի բարքերի նորոգումը:

Սակայն պոեմի որոշ հատվածներին ծանոթանալուց հետո ընկերն արտասանել է.

Միայն դու ես ընդունակ այնպիսի հրաշագործության,

(Որ) կուռքերին դարձնի Քաաբայի սրբատեղիին վայել¹:

Այդպես է տեղի ունենում պատմական փաստի գիտակցված աղապատացիան, երբ անցյալից եկող պատմական դրվագը և իրական անձը բանաստեղծական հեռահար մտահղացմամբ դառնում են ժամանակակից, հինավուրց հերոսների կերպարները նոր հողի վրա՝ դառնում իդեալ և ուսուցանող օրինակ:

Պոեմի հիմնական գաղափարը պարսից զրադաշտական շրջանի հզոր թագավոր Խոսրով Փարվիզի և քրիստոնյա Շիրինի վերանձնային սերն է, որի հենքի վրա բարձրանում է Նիզամիի հումանիստական հայացքների ողջ համալիրը՝ ամուր պետականության գաղափար, իսլամական բարոյական նորմերի փառաբանություն, կրոնական հանդուրժողականություն, կամքի ազատություն, ժողովուրդների բարեկամություն:

Պոեմի արմատները գնում են դեպի բյուզանդական, արաբական, հայկական, ասորական աղբյուրներն ու դրանց հենքի վրա ստեղծված լեգենդները:

Ըստ X դարի արաբ ժամանակագիր Թաբարիի «Պատմության»՝ Խոսրով թագավորի սիրած կինը տիկնանց տիկին «Շիրինն էր, ով առավել էր բոլորից՝ գեղեցկությամբ և խելքով»²:

Սակայն ավելի վաղ շրջանից՝ VII դարից են գալիս հայ մատենագիրների, հատկապես պատմիչ Սեբեոսի տեղեկությունները: Ավելին, Լևոն Մելիքսեթ Բեկը հենց Սեբեոսի աղբյուրն է համարում Նիզամիի «Խոսրով և Շիրին» պոեմի արքետիպը: Սեբեոսը ժամանակակիցն էր Մուհամմադ մարգարեի և առաջիններից մեկը համաշխարհային պատմագրության մեջ, ով տեղեկացրեց նրա ուխտի մասին, ի դեպ՝ առանց հակաճառության, անկիրք և ճշմարիտ: Ամենայն հավանականությամբ մուհամմադյան կրոնի մոնոթեիստական ոգին չէր հակասում Սեբեոսի կրոնական պատկերացումներին: Ավելին,

¹ Hakim Nezami Gyanjavi, Khosrov va Shirin, Vahid Dastgerdi, Tehren, 1376 (պարսկ.), հետագայում՝ Նիզամի, նշվ. աշխ.:

² Al-Tabari, Tarik al-Rusul wa al-muluk, Kahire, 1990, N 2, (1053), էջ 224 (արաբ.):

Սերբետուը շեշտում էր Մարգարեի «հմուտ ու տեղյակ» լինելը մովսիսական պատմությանը³:

Նիզամին գրում է.

Խոսրովի և Շիրինի պատմությունը գաղտնիք չէ,

Առավել սիրելի ավանդազրույց չկա,

Եվ սրտահաճո այդ զրույցը,

Պահում ու պահպանում են, ինչպես հարսնացուին.

Նրա մաքրագիր (իրական) ցուցակները անհայտ են առօրյա աչքից,

Իսկ սևագիրները գտնվում են Պարտավում:

(Հենց) այդ կողմերում պահպանված հնագույն պատմություններից,

Այս ավանդության գանձը ինձ հայտնի դարձավ⁴:

Սակայն Նիզամիի ոչ մի ակնարկից հայտնի չի դառնում, թե որ լեզուներով են եղել այդ ձեռագրերը:

Նիզամին, որ դարի կրթյալներից մեկն էր, հանրագիտակ, անշուշտ ծանոթ է եղել և՛ բանահյուսական, և՛ ձեռագիր աղբյուրներին, իսկ բազմաթիվ հատվածներից կարելի է ենթադրել, որ ճանաչել է նաև Հայոց աշխարհը. պոեմում բազմիցս հիշատակել է Հայաստանի տեղանքը, նույնիսկ ժայռափոր վանքերում ծվարած միստիկներին.

Ժայռափոր հինավուրց մի վանք կար,

Ծերունի վանականների մենաստանն էր,

Շապուհը մտնում է այդ հնամենի վանքը,

Սուրբ ճգնավորների սովորույթի համաձայն⁵:

³ Հմմտ. Պատմութիւն Սերբետուի, աշխատասիրությամբ՝ Գ.Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 135:

⁴ Նիզամի, նշվ. աշխ., գլուխ XI (ներթափանցում գրքի էություն), բեյթ 35-40 (պարսկ.):

⁵ Նիզամի, Խոսրով և Շիրին, գլուխ XIX, բեյթ 20-25: Ի դեպ, այս գլխի վերնագիրը, որը պարսից բնագրում հնչում է «Շապուհի ճանապարհորդությունը

Խոսքով Փարվիզը՝ զրադաշտական Իրանի հզոր թագավորը՝ արքունական խրախճանքների և գինարբուքների հերոսը, իր արքայական վարք ու բարքով Նիզամիի կերտմամբ մուտք է գործում XII դարի իսլամական միջավայր և ճանաչելի դառնում ժողովրդին:

Ճիշտ է, Նիզամիի պոեմի թանձրույթը ճշմարիտ սիրո հաղթանակն է, սակայն պոեմը պոլիթեմատիկ է, և թեմաների ողջ համալիրում ներկա է նաև Խոսքովի կրոնական հանդուրժողականության թեման: Մի կողմից՝ Նիզամին կարծես քննադատում է Խոսքովի՝ ասկետիզմից հեռու, անհոգ ու աշխարհիկ կենցաղը, մյուս կողմից՝ նրա կրոնական հանդուրժողականության փաստը Նիզամիի մատուցմամբ լայն ընդհանրացում է ստանում և կարծես տիրողների և իշխողների համար դառնում ուսուցանող օրինակ Իրանում ապրող բազմաէթնիկ ժողովուրդների նկատմամբ:

Սեբեոսն այսպես է հաղորդում Խոսքովի հրամաններից մեկը. «...ամեն ոք ամուր կենա իր հայրենի օրենքին և ով որ չցանկանա մնալ իր հավատին և ապստամբելով կիրաժարվի իր օրենքից, նա կմեռնի»⁶:

Ամենայն հավանականությամբ այդ կամքի ազատության արդյունքում էր, որ ըստ Սեբեոսի. «...Ողոզոմեան տոնի օրը Շիրինի վանքից գնում էին քրիստոնյաները արքունաց դուռը պաշտելով, կարդում էին Ավետարան, նրանք թագավորից ստանում էին պարգև և հեռանում էին»⁷:

Եվ այսպես, «Խոսքով և Շիրին» պոեմում Նիզամին վերականգնում է «փարվիզականության» չափանիշները՝ հանդուրժողականություն, կամքի ազատություն, ընտրության իրավունք, կնոջ մեծարման և նրա դերի գնահատում, աշխատանքի փառաբանում, առատաձեռնություն, արդարադատություն, նաև սիրային արկածներ և իսլամում արգելված՝ անզուսպ գինարբուք: Նիզամին հերոսացնում է Խոսքովին, սակայն ինքնակենսագրական մի դրվագով հակադրվում է իսլամի կողմից անընդունելի բարքերին՝ գինեմոլությանը:

Հայաստան՝ Շիրինին որոնելու», «պատահաբար» դուրս է մնացել Բաքվի՝ 1985 թ. հրատարակության ռուսերեն թարգմանության ցանկից:

⁶ Սեբեոս, նշվ. աշխ., էջ 85:

⁷ Նույն տեղում:

Երբ (շահին) լուր տվեցին, թե Նիզամին գալիս է,
Նրա ուրախությունը կրկնապատկվեց:

.....
Հրամայեց մեջտեղից հավաքել գինու շշերը,
Նրբամտություն ցուցաբերեց իմ (հավատքի) նկատմամբ⁸:

«Խոսքով և Շիրին» պոեմն արտացոլում է արևելյան պետության կարևոր ինստիտուտներում (արքունիք-հրապարակ) ձևավորվող էսթետիկական, բարոյահոգեբանական, իրավական, կրոնական արժեքների համակարգը: Նիզամիի ողջ պոեմի «էլիտա-պլեբս» հարաբերություններում և մթնոլորտում, նրա կողմից գիտակցված անախրոնիզմի արդյունքում խաղաղ գոյակցում են երեք համաշխարհային կրոնները՝ գրադաշտականությունը, քրիստոնեությունը և իսլամը: Ադապտացիայի մեթոդը ծառայում է Նիզամիի հումանիստական արժեքների և իդեալների հաստատմանը, այն է՝ կրոնների և ժողովուրդների խաղաղ համակեցությունը: Մեկ այլ պոեմում՝ «Շարաֆնամեում», Նիզամին գրում է.

Ամեն մի ձեռագրից վերցրի մտքի թանձրույթը,
Եվ այն հանդերձավորեցի բանաստեղծական չափով,
(Վերցրի) բազմաթիվ պատմություններ հնից ու նորից,
Հրեական, քրիստոնեական և պահլավական....⁹

Նիզամին մի կողմից վերակերտում է մինչիսլամյան պարսից արքունիքի հարուստ ու փառավոր անցյալը, մյուս կողմից՝ ջնջելով ժամանակի կրոնական անջրպետը, Խոսքով թագավորին դիտում է իսլամական բարոյական նորմերի և արժեքների միջավայրում: Նա համակրանքով է հիշատակում անցյալը և, ներբողելով այն, կուռ միասնականության և ամբողջականության մեջ է տեսնում Իրանի պատմամշակութային անցյալն ու ներկան:

⁸ Նիզամի, նշվ. աշխ., էջ 450:

⁹ Hakim Nezami Gyanjavi, Sharafname, Vahid Dastgerdi, Tehran, 1376, էջ 69 (պարսկ.):

Մենք Նիզամիի պոեզիայում չենք որոնում իրական փաստերի ֆոտոգրաֆիկ կրկնությունը կամ պատճենը, այլ պատմական տեղեկությունների շղթայով փորձում ենք վերականգնել նրա գեղարվեստական միտքը սնող աղբյուրները:

Պատմական ավանդույթն ազդարարում է, որ 628 թ. Մուհամմադ մարգարեն, որին արդեն հետևում էր նորընծա մահմեդականների մեծ զանգված, պարսից Խոսրով թագավորին գրում է մի նամակ, որի մեզ հասած տարբերակներից մեկը հնչում է այսպես. «Հանուն ողորմած և բարեգութ Ալլահի. Մուհամմադից՝ Ալլահի ծառայից և Նրա առաքյալից, Խոսրովին՝ պարսից մեջ մեծագույնին: Խաղաղություն նրան, ով հետևում է ճշմարիտ ուղուն և հավատում է Ալլահին ու նրա առաքյալին և վկայում է, որ չկա Աստված բացի Ալլահից: Չունի ընկերակից և Մուհամմադը նրա ճշմարիտ ծառան և առաքյալն է: Կոչում եմ քեզ իմ աղոթքով առ Ալլահը, զի ես եմ ճշմարիտ առաքյալն Ալլահի (ուղարկված)՝ մարդկությանը, որպեսզի նախագգուչացնեն նրանց, ովքեր ապրում են և ընդդեմ անհավատների հաստատեմ Խոսրը (Ղուրանը - Ա.Կ.): Ընդունի՛ր Իսլամը, և դու փրկված ես, իսկ եթե ուրանաս այն, ապա քեզ վրա է մոզերի մեղքը»¹⁰:

Շատերն են հիշատակել այս նամակը՝ պատմիչներ Թաբարին, Բալամին և ուրիշները: Սահիհ ալ Բուխարին (IX դ.), որ հավաստի հադիսների աղբյուրագետն էր, գրում է. «...Աստծո առաքյալը (թող Աստված օրհնի և ողջունի նրան) իր ուղերձը մեկի միջոցով ուղարկեց՝ հրամայելով, որ նա հանձնի Բահրեյնի տիրակալին: Նա դա հանձնեց Բահրեյնի տիրակալին, ով էլ այն ուղարկեց Խոսրովին: (Խոսրովը) կարդալուց հետո պատռեց ուղերձը՝ մանր կտորների վերածելով այն»¹¹:

Ամենայն հավանականությամբ այս հավաստի աղբյուրներից է օգտվել իսլամի ջատագով Նիզամի Գյանջևին և իր բանաստեղծական արքստրահոմով «Խոսրով և Շիրին» պոեմում մի հատված է նվիրել այդ նամակին՝ կրկին և կրկին հորդորելով Խոսրովին թողնել մոզերի

¹⁰ Հմմտ. Колесников А. И. Две редакции письма Мухаммеда сасанидскому шаху Хосрову II Парвизу. Палестинский сборник: Ленинград, 1967, вып. 17(80).

¹¹ Հմմտ. Сахих Аль-Бухари, Мухтасар, “Умма”, 2003, 57 (63), տե՛ս նաև՝ Ալ Թաբարի, նշվ. աշխ. (1571), էջ 684:

կրակը և ընդունել իսլամ: Այդ գլուխը կոչվում է «Մարգարեի նամակը Խոսրովին»¹²:

Այս հայտնի պատմական փաստը գիտակցված և հետևողականորեն ադապտացվել է Նիզամու կողմից մի մտահղացմամբ: Նիզամին փորձել է արդեն հաղթանակած իսլամի և նրա ստեղծողի հետ ուղղակիորեն հանդիպեցնել զրադաշտական շրջանի թագավոր Խոսրով Փարվիզին: Նրանք հանդիպում են երազում, և կրկին Խոսրովը լսում է Մարգարեի հորդորը՝ ընդունել իսլամ:

Մուհամմադի առաջարկին՝ թողնել մոզերի կրակը և ընդունել իսլամ, Խոսրովը պատասխանում է.

Ես ինչպես մերժեմ նախնյացս կրոնը,
Ինչպես ամոթահար լինեմ անցյալ արքաներիս մոտ.
Սիրտս համաձայն է, սակայն, ճակատագիրը չի կամենում:

Հակառակ Նիզամիի ջանքերին՝ փառապանծ Խոսրովին բերելու իսլամական աշխարհ, Խոսրովը, ինչպես 500 տարի առաջ, մերժում է ընդունել իսլամ:

Մուհամմադի և Խոսրովի զրույցի գաղափարական թանձրույթը հենց այս միտքն է. նախկին քաղաքակրթության հիշատակն անմար է, իսկ նորը՝ անսասան:

Այսպիսով, «Խոսրով և Շիրին» պոեմում, հանդիպեցնելով հին և նոր վարդապետության ջատագովներին, Նիզամին մի կողմից Իրանը տեսնում է իր հզոր էթնոմշակութային միասնականության մեջ՝ մարելով անցյալի նկատմամբ կարոտախտը, մյուս կողմից իր՝ իսլամի ադեպտին հատուկ նվիրվածությունն ու խոնարհումն է արտահայտում:

Ներկայացնելով Իրանի երկու հակադիր՝ հեթանոսության և մոնոթեիզմի դարաշրջանները՝ Նիզամին հաստատում է իրանական քաղաքակրթության պատմամշակութային հաջորդականության և անընդհատության փաստը:

¹² Նիզամի, նշվ. աշխ., Թեհրան, 1376, էջ 430:

KOZMOYAN ARMANUSH

**THE IDEA OF THE ETHNOCULTURAL UNITY OF IRAN IN THE POEM
“KHOSROV AND SHIRIN” BY NIZAMI**

Nizami rebuilds the rich and glorious past of the pre-Islamic Persian court by erasing the time and religious barriers.

In his records, he mentions the past with affection and sees the historical and cultural past and present of Iran in solid integrity.

Confronting the old and new religions in the poem “Khosrov and Shirin”, Nizami sees Iran in ethno-cultural unity. Presenting the two opposite eras of Iran, paganism and monotheism, Nizami confirms the fact of ethno-cultural sequence and continuity of Iran.